

**ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՖՈՐՄԱՏԻՉԱՑԻԱՑԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ
ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄԸ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

ԼԻԼԻԹ ՇԱՔԱՐՅԱՆ

21-րդ դարի նախաշեմին մենք ականատեսը դարձանք տրանսֆորմացիոն այնպիսի գործընթացների, որոնք նպաստեցին հետաքրքրունաբերական հասարակության փոխակերպմանը տեղեկատվական հասարակության: Այդ գործընթացի գլխավոր շարժիչ ուժը դարձավ ինֆորմատիկացիան՝ տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների արմատական թափանցումը մարդու կյանքի ու գործունեության բոլոր ոլորտներ: Այն դարձել է մեր ժամանակի կարևորագույն բնութագրիչներից մեկը: Գոյություն չունի հասարակական գործունեության որևէ ոլորտ, որն այս կամ այն չափով կապված չլինի տեղեկատվություն ստանալու և մշակելու կիրառական գործընթացների հետ: Ժամանակակից աշխարհում մրցակցության գերիշխող առարկան՝ նյութական հիմքը, որպես համակարգաստեղծ գործոն, այլևս իր տեղը զիջել է տեղեկատվական տեխնոլոգիաներին, իսկ հաջողության բանալին նրանց ձեռքերում է, ովքեր կարողանում են ճիշտ կառավարել տեղեկատվական հնարավորություններն ու ռեսուրսները: Տեղեկատվական տեխնոլոգիաներն իրենց հերթին ակտիվորեն ազդում են քաղաքականության, տնտեսության, պետության անվտանգության բաղադրամասերի վրա, ընդ որում՝ առաջընթացին զուգահեռ՝ այդ կախվածությունն աճում է: Տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ ներդրումը հանգեցրել է նաև հասարակության սոցիալական կառուցվածքի փոխակերպման: Ժամանակակից աշխարհն ազատ է ազգային սահմաններից: Գործունեության բոլոր ոլորտներում առաջ են եկել գործառական նոր կառուցվածքներ (անդրազգային կորպորացիաները, ժամանակակից էլեկտրոնային տնտեսությունը և այլն), որոնց հիմքում ընկած է «ցանցը»:

Տեղեկատվության անցումը մարդկության համար կարևորագույն ռեսուրսների շարքը բնականաբար ձևավորում է այդ ռեսուրսների համար պայքար: Ներկայումս տեղեկատվական ռեսուրսներին տիրապետելու համար պայքարը, տեղեկատվական գերիշխանության հասնելը և պահպանելը նշանակալի տեղ են զբաղեցնում զարգացած երկրների աշխարհաքաղաքական մրցակցության մեջ: Տեղեկատվական ազդեցությունն այս առումով դարձել է ոչ պակաս արդյունավետ ձև, քան ավանդական զենքը և ռազմական տեխնիկան:

Տեղեկատվական հասարակության զարգացման և ինֆորմատիզացիայի գործընթացներն այսօր նշանակալի ազդեցություն ունեն նաև ՀՀ-ում: 2000 թվականից սկսած՝ տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտը Հայաստանում հռչակվել է տնտեսության զարգացման գերակա ճյուղ: Ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան մասնագետներն ու կազմակերպությունները իրականացրել են ՏՀՏ ոլորտի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններ: Սակայն հարկ է նշել, որ դրանք առավելապես կատարվել են տեխնոլոգիական կամ տնտեսական ստանդարտ սխեմաների հիման վրա՝ առանց հաշվի առնելու Հայաստանի սոցիալական և մշակութային առանձնահատկությունները: Այնինչ հասարակության ինֆորմատիզացիայի գործընթացն ամբողջական ուսումնասիրելու համար հարկ է հետամուտ լինել այլ մոտեցման, որը կկոչենք **սոցիալ-մշակութային**: Այսինքն՝ խոսքը տվյալ դեպքում «տեխնոլոգիայի տեղափոխման» հասկացության մասին է: Դա նշանակում է՝ մի հասարակության մեջ մշակված ցանկացած տեխնոլոգիայի տեղափոխում կամ յուրացում մեկ այլ հասարակության կողմից: Ընդ որում ակնհայտ է, որ տեխնոլոգիան չի կարող մշակութապես և սոցիալապես չեզոք լինել, ուստի տեղափոխման խնդրում վճռական նշանակություն է ստանում այն լարվածությունը, որն անխուսափելիորեն առաջանում է ներմուծվող տեխնոլոգիայի նախագծում առկա և ընդունող երկրի մշակութային արժեքների տարբերությունների պատճառով: Մա խոսում է տեխնոլոգիայի մշակութային հարաբերականության մասին, ինչից ինքնաբերաբար բխում է տեխնոլոգիայի մշակութային յուրացման հարցը: Տեղեկատվական տեխնոլոգիաների մշակութային յուրացման գաղափարը ենթադրում է հասարակական միջավայրի տարասեռ հարաբերությունների ցանց, ներմուծված տեխնոլոգիայի կայունացման ընթացք, տեխնոլոգիայի շուրջ մշակութային փորձառության շերտի ստեղծում: Առաջարկվող սոցիալ-մշակութային մոտեցումը հնարավորություն է ընձեռում ժամանակակից հասարակություններին բնորոշ ինֆորմատիզացիայի գործընթացն ուսումնասիրելու ոչ միայն տեխնիկական ազդեցության, այլև, որն ավելի կարևոր է, սոցիալական ազդեցության դիտանկյունից: Ինչպես այս կապակցությամբ փաստում է Ի. Մելյուխինը, «նոր տիպի հասարակության հիմքերի ձևավորումը միայն որոշակի չափով է սահմանվում տեխնիկական գործոններով: Այդ գործընթացի վրա առավելապես ազդում են փոխակերպումները, որոնք տեղի են ունենում տնտեսության ոլորտում, հասարակության սոցիալական կառուցվածքում, քաղաքական գործընթացներում, հասարակական գիտակցությունում և այլն»¹:

Սոցիալ-մշակութային մոտեցման շրջանակներում կարելի է առանձնացնել հասարակության ինֆորմատիզացիայի հետևյալ ցուցանիշները:

¹ Мелюхин И. С. Информационное общество: истоки, проблемы, тенденции развития. М., 1999, с. 43.

1. **Տեխնոլոգիական:** Տեխնիկական հիմքի (հեռախոսայնացման մակարդակ, հեռուստատեսության, ռադիոյի և ինտերնետի տարածվածություն) զարգացումը հասարակության հաջող ինֆորմատիզացիայի անհրաժեշտ նախադրյալ է: Տեխնոլոգիական ապահովվածության առումով սկզբունքային է հաղորդակցության արդիական ենթակառուցվածքի առկայությունը, որը հարմարեցված կլինի թե՛ գլոբալ ցանցերի ընձեռած հնարավորություններից օգուտներ քաղելուն, թե՛ տեղական նպատակներին արդյունավետ ծառայելուն: Հաղորդակցության ենթակառուցվածքի կարողությունների սահմանափակությունը կամ անմատչելիությունը (բարձր գնի կամ գիտելիքների ու հմտությունների բացակայության պատճառով) կարող է աննպաստ պայմաններ ստեղծել երկրի համար՝ հարուցելով ավելի մեծ կախվածություն արտաքին հանգամանքներից, ինչպես նաև մեղմելու փոխարեն ավելի շեշտել հասարակության մեջ առկա անհավասարությունները: *Տեղեկատվական հասարակության ձևավորումը պետք է ընթանա տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների հասանելիության ապահովման, հասարակության համար համապատասխան տեղեկատվական ռեսուրսների և առցանց ծառայությունների ստեղծման, քաղաքացիների կրթական մակարդակի բարձրացման և համալիր այլ ծրագրերի ու միջոցառումների համակարգված և հետևողական իրականացման շնորհիվ*^{*}:

2. **Սոցիալ-քաղաքական:** Հասարակության ինֆորմատիզացիայի սոցիալ-քաղաքական ցուցանիշների շարքին կարելի է դասել հասարակության քաղաքական կյանքի ժողովրդավարացումը, հասարակության և պետության տեղեկատվական անվտանգության ապահովումը, քաղաքացիների և սոցիալական ինստիտուտների համար իրավունքի ապահովման արդյունավետ համակարգի ստեղծումը տեղեկատվությունն ազատ ձեռք բերելու և տարածելու տեսանկյունից: «Տեղեկատվության ազատ հասանելիությունը, առանց որի իմաստ չունի խոսել տեղեկատվական հասարակության մասին, սոցիալ-քաղաքական բարդագույն պրոբլեմ է»²: Գիտելիքի, տեղեկատվության առկայությունը տեղեկատվական հասարակության հետագա հաջող էվոլյուցիայի և գործառության դեռևս բավարար պայման չէ: Ուստի և անհրաժեշտ է, որ հասարակության անդամներին հասանելի լինի տեղեկատվությունը, և ունենան դրա կիրառման հնարավորություն իրենց պրակտիկ գործունեությունում: Առաջին ու թերևս կարևորագույն գործոնը, որը խթանող դեր կարող է խաղալ մյուս բոլոր դեպքերում, պետական ռազմավարության և քաղաքականության առկայությունն է: Շատ երկրներ հաջողության են հասել հենց կառավարության ձեռնարկած գոր-

^{*} Շեղատառերով նշված հատվածները մեջբերված են հեղինակի կողմից 2016 թվականին իրականացված սոցիոլոգիական ուսումնասիրությունից, որը հարապարակված չէ:

² **Ракитов А. И.** Информация, наука, технология в глобальных исторических изменениях. М., 1998, с. 469.

ծուն քայլերի ու հետևողական քաղաքականության շնորհիվ: Սա նշանակում է պատշաճ օրենսդրական մշակումներ ու կարգավորում, ֆինանսավորում ու հարկային քաղաքականություն, օժանդակություն կրթական համակարգի և հաղորդակցային ենթակառուցվածքի արդիականացմանն ու զարգացմանը: Ինչպես նշում են փորձագետները, *երբ ՏՀՏ ռազմավարությունը և քաղաքականությունը իրենց տեղում են, մարդկային ու տեխնոլոգիական կարողությունների, ներուժի մեջ կատարվող նույնիսկ սահմանափակ ներդրումները կարող են խթանիչ ազդեցություն ունենալ ոլորտում հաջողության հասնելու համար*: Հայաստանում ՏՀՏ ոլորտում մշակվել են ռազմավարություն և տարբեր նախագծեր (2010 թվականի փետրվարի 25-ին ՀՀ կառավարության № 7 արձանագրային որոշմամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հասարակության ձևավորման հայեցակարգը (2010-2012 թթ.)», որով նախատեսվել է «Համակարգչային գրագիտություն դպրոցում» նախագիծը: Հայեցակարգը պետք է ապահովի հանրակրթական դպրոցների շրջանավարտների կողմից պարտադիր համակարգչային հմտությունների տիրապետումը և նրանց բնականոն ընդգրկումը էլեկտրոնային հասարակության մեջ: Նմանատիպ նախագիծ է նաև «Համակարգիչ բոլորի համար» ծրագիրը³, որը հնարավորություն կտա ավելի մատչելի դարձնելու համակարգիչները և դրանց առնչվող էլեկտրոնային կառավարման գործառնությունները բնակչության ամենալայն խավերի համար): Այնուհանդերձ, Հայաստանի դեպքում կառավարության դերը հաճախ ձևական է և փաստորեն հեռու է վճռական գործոն լինելուց:

Գնահատելով սոցիալական պայմանների նշանակությունը՝ պետք է համաձայնվել Լ. Տուրոուի հետ, որը, դիտարկելով հասարակության ինֆորմատիզացիայի գործընթացը, պնդում է, որ «պրոբլեմներն այստեղ տեխնիկական չեն, մեզ անհրաժեշտ ամբողջ տեխնիկական առկա է, հարցն այն է, թե ինչն է հնարավոր, և ինչն է անհնար սոցիալական իմաստով»⁴: Սոցիալ-քաղաքական գործոնների շարքին են դասվում նաև պետության քաղաքականությունը, հասարակական շարժումները, սոցիալական ուժերի հարաբերակցությունը երկրում և այլն: Ինչպես նշում է Ու. Դայգարդը, «մեզ անհրաժեշտ որոշումները դուրս են տեխնիկական և տնտեսական պրոբլեմատիկայի շրջանակներից: Վերջին հաշվով, գլխավոր պրոբլեմները քաղաքական են»⁵:

3. Սոցիալ-տնտեսական: Հասարակության ինֆորմատիզացիայի սոցիալ-տնտեսական նախադրյալները բնական ռեսուրսների շուկայի, աշխատանքի և կապիտալի ապահովումն են, որոնք ձևավորում են հասարակության տեղեկատվական ռեսուրսները և դրանք փոխակերպում

³ Տե՛ս <http://www.computerforall.am/>

⁴ **Туроу Л.** Будущее капитализма. Новосибирск, 1999, с. 101.

⁵ Новая технократическая волна на Западе. М., 1986, с. 353.

սոցիալ-տնտեսական զարգացման ռեսուրսների: Այս ցուցանիշը ներառում է նաև ժամանակակից հասարակությունում կիրառվող ու լայնորեն տարածվող տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակության, նրա սոցիալական և մասնագիտական կառուցվածքի, աշխատանքի և կենցաղի վրա: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը նախ և առաջ անմիջականորեն ազդում է մարդկանց աշխատանքային գործունեության վրա: Եթե արդյունաբերական հասարակությունն ուղղված էր զանգվածային արտադրությանը և սպառմանը, ապա տեղեկատվական տեխնոլոգիաների տարածման պարագայում տեղի է ունենում անցում զանգվածային արտադրությունից մասնավոր արտադրության՝ հիմնված քաղաքացիների անհատական պահանջների վրա: Ինֆորմատիկացիայի ազդեցությամբ արդյունաբերության ոլորտի որակական վերակազմավորումները արտացոլվում են նաև աշխատանքի բովանդակության (աշխատանքային գործառույթներ, նրանց որակական և քանակական բնութագրիչներ) փոփոխության վրա: Ֆիզիկական շարժումները փոխարինվում են տեղեկատվական կապերով, ցածր որակավորված աշխատանքն անհետանում է՝ իր տեղը զիջելով բարձր որակավորվածին, վերանում են ավանդական աշխատանքային գործառույթները: Տեղի է ունենում աշխատանքի «գիտականացում»: արտադրության գործընթացում գիտելիքի կիրառման ծավալները մեծանում են, որը նպաստում է աշխատանքի ստեղծագործական աճին: Նոր տեխնոլոգիան պահանջում է ոչ ստանդարտ աշխատողներ, ոչ ռոբոտներ, այլ ստեղծագործ անհատներ: *Այս պարագայում կարևոր ցուցանիշ է դառնում կենսամակարդակը: Օժտված մասնագետները ձգտում են կենտրոնանալ բարեկեցիկ, բարձր կենսամակարդակ ունեցող դաշտերում, և հեղինակավոր միջազգային ընկերությունները հենց նման տեղերում են փնտրում նորարարության ընդունակ «տաղանդների»՝ հաստատելու գիտահետազոտական մշակումների ու բարձրակարգ ծրագրային արտադրանքի իրենց կենտրոնները: Ի տարբերություն զարգացած երկրների և բազմաթիվ զարգացող երկրների՝ Հայաստանն առայժմ չունի նման միջավայր, ինչը պատճառ է դառնում բարձրորակ մասնագետների արտահոսքի: Ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում այսօր շարունակում է արդիական մնալ «ուղեղների արտահոսքի» հիմնախնդիրը: Ինչպես ցույց են տալիս հետազոտության արդյունքները, «ուղեղների արտահոսքը» պայմանավորող գերիշխող գործոնը հայրենիքում աշխատանքի ցածր վարձատրությունն է:*

Այսպիսով, արտադրության ինֆորմատիկացիան նպաստում է, որ մարդիկ անցնեն գործունեության մի տեսակից մյուսին: Դա մոտիվացնում է նոր աշխատատեղեր ստեղծելու մասնավորապես տեղեկատվության մշակման ոլորտում: Նոր տեղեկատվական տեխնոլոգիան, փոխելով աշխատանքի բնույթը և բովանդակությունը, նպաստում է, որ

կրճատվեն աշխատանքային ծախսերը, հետևապես նաև՝ աշխատողների թիվը՝ առաջացնելով գործազրկության աճ:

Ինֆորմատիզացիայի սոցիալ-տնտեսական ցուցանիշներից է նաև ֆինանսավորման գործոնը, որը կարող է ունենալ ինչպես ներքին, այպես էլ արտաքին աղբյուրներ: *Այստեղ, ինչպես վկայում են հետազոտության տվյալները, նույնպես բախվում ենք խիստ անհավասարակշռության. այսօր ՀՀ-ում ՏՀՏ ծրագրերը հիմնականում իրականացվում են արտասահմանյան պատվերով ու ֆինանսավորմամբ՝ օգտագործելով տեղական էժան աշխատուժն ու ստանալով օգուտների փոքր մասը:* Մա վկայում է ոլորտի ինքնաբուխ, ինքնակազմակերպվող բնույթի մասին, ինչը ՀՀ ՏՀՏ պետական ռազմավարության պայմաններում ուղղակի անընդունելի է:

4. Մշակութային: Մշակութային ցուցանիշի համար նախ և առաջ էական է ինֆորմատիզացիայի զարգացման փաստի գիտակցումը հասարակության կողմից, ինչն այս պրոբլեմը վերածում է սոցիալականի: Անհրաժեշտ է հասարակության հոգևոր-մշակութային ներուժի բարձրացում, որի բաղադրիչներն են գիտելիքը և դրա կրողները՝ մարդիկ: Ինչպես արդեն նշվեց, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն ինքնանպատակ չէ և պետք է հարմարեցվի տվյալ հասարակության մշակութային համատեքստին. հակառակ դեպքում հնարավոր են անկանխատեսելի հետևանքներ տվյալ հասարակության համար ինչպես տնտեսական, տեխնոլոգիական, այնպես էլ քաղաքական ու սոցիալ-մշակութային առումներով: *Այս տեսանկյունից, ինչպես ցույց տվեցին հասարակության շրջանում անցկացված հարցումներն ու փորձագետների մեկնաբանությունները, չնայած տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանն ու կիրառմանը, հասարակության լայն շերտերի համար այն մնում է չբացահայտված՝ գործառական հնարավորությունների, կիրառման առանձնահատկությունների ու նպատակների առումով: Տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառողները երբեմն ոչ նպատակային են կիրառում այդ միջոցները. դրանք կա՛մ միայն որպես ժամանցի միջոց են դառնում, կա՛մ ոչ բոլոր գործառական հնարավորություններն են օգտագործվում: Մա խոսում է մեր հասարակության մեջ տեղեկատվական գիտակցության ցածր մակարդակի մասին:* Հասարակության ինֆորմատիզացիայի մշակութային բաղկացուցիչներից են նաև հասարակության ինտելեկտուալացումը (կրթության զարգացումը և գիտության առաջատար ճյուղերի ձեռքբերումների օգտագործումը) և մշակութային ներուժի հետագա կատարելագործումը և զարգացումը: Այստեղ առաջնային նշանակություն են ստանում մարդկային կապիտալը, ոլորտի մասնագետների կուլեկտիվ հատկանիշներն ու ունակությունները՝ ներառյալ ազգային ինքնությունն ու ավանդույթները: Մրցունակ մարդկային կապիտալը ավելի, քան ուրիշ գործոն, ձևավոր-

վում է տարիների ընթացքում և դառնում է տևական տվյալ երկրին բնորոշ յուրահատկությունների շնորհիվ: Հասարակության մտավոր ներուժի աճը մարդկայնացնում է ինֆորմատիզացիայի գործընթացի տեխնիկական-տեխնոլոգիական բաղկացուցիչը, որի զարգացումը ենթադրում է նախորդ սերնդից ժառանգած գիտական և մշակութային ներուժի պահպանում, գիտության, տեխնիկայի նորագույն ձեռքբերումների յուրացում, մարդկային գործողությունների ենթարկում հումանիզմի պահանջներին, իդեալներին, անհատի ազատության և սեփական արարքների համար պատասխանատվության զարգացում:

Այսպիսով, հասարակության ինֆորմատիզացիայի սոցիալական-մշակութային մոտեցումը մի կողմից հասարակության ինֆորմատիզացիայի գործընթացի սոցիալական դետերմինացիան է, մյուս կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցության լայնածավալ տարածումը հասարակության բոլոր ոլորտների և մարդկային կենսագործունեության միջոցների վրա: *Այս մոտեցման պարագայում հայաստանյան իրականությանը հատուկ է ինֆորմատիզացիայի գործընթացի ոչ հավասարակշռված ու անհամաչափ բնույթը: ՀՀ-ում ներկայումս նկատելի են ՏՀՏ ոլորտի շարունակական աճ, տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայությունների ոլորտի հետզհետե ընդլայնում, միևնույն ժամանակ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գրագիտության ցածր մակարդակ, ՏՀՏ ոլորտի մասնագետների արտահոսք: Ունենք պետական ռազմավարություն, սակայն չկան պետական ֆինանսավորում ու հոգածություն, կա հաղորդակցային ենթակառուցվածքի զարգացման և հասանելիության ապահովման խնդիր և այլն:* Այնինչ ՏՀՏ ռազմավարություններ մշակողները պետք է իմանան, որ ՏՀՏ-ները մեկուսի չեն գործում: Օգուտները և ռիսկերը կախված են սոցիալական, տնտեսական և կազմակերպական գործոններից:

Ամփոփելով կարելի է առանձնացնել հասարակության ինֆորմատիզացիայի հետևյալ սահմանումը. **հասարակության ինֆորմատիզացիան տեղեկատվության՝ որպես կառավարման և զարգացման ռեսուրսի տիրապետման գլոբալ գործընթաց է հասարակության և նրա անդամների մտավոր ներուժի բարձրացման նպատակով, ինչն էլ իր հերթին ապահովում է քաղաքակրթության հետագա առաջընթացը:** Այսօրինակ հայեցակարգերի առկայության դեպքում հասարակության ինֆորմատիզացիան ոչ միայն տեխնիկական տեխնոլոգիական երևույթ է, այլ նաև, ինչը շատ կարևոր է, ժամանակակից մշակույթի սոցիալական երևույթ: Հասարակության ինֆորմատիզացիան տեղի է ունենում սոցիալական որոշակի միջավայրում և կախված է տվյալ միջավայրից: Հետևապես հասարակության ինֆորմատիզացիայի արագությունը, բովանդակությունը, տարբեր բաղկացուցիչների դրսևորումը, ինչպես նաև արդյունավետությունը կախված են տվյալ հասարակության տեխնիկական հենքից, սոցիալական միջավայրից, սոցիալական պայման-

ներից և իրական վիճակից, որոնցում ծավալվում է ինֆորմատիզացիայի գործընթացը:

Բանալի բառեր - *ինֆորմատիզացիա, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տեղեկատվական հասարակություն, տեղեկատվական ազդեցություն, էլեկտրոնային կառավարում, ցանց, մտավոր ներուժ*

ЛИЛИТ ШАКАРЯН – Моделирование процесса информатизации в рамках социокультурного подхода. – Информатизация – глобальный процесс овладения информацией, основным ресурсом управления и развития современных обществ. Социокультурный подход к его моделированию характеризуется социальной детерминацией и широкомасштабным влиянием информационных технологий на все слои общества и ресурсы человеческой деятельности. Это даёт возможность исследовать процесс информатизации с точки зрения не только технического, но и, что более важно, социального воздействия. В рамках социокультурного подхода и с позиций армянского общества в статье выделены и проанализированы технологический, социально-политический, социально-экономический и культурный критерии.

Ключевые слова: *информатизация, информационные технологии, информационное общество, информационное воздействие, электронное управление, сеть, интеллектуальный потенциал*

LILIT SHAKARYAN – Modeling of Informatization Process within the Framework of Socio-Cultural Approach. – This paper presents a way of modeling the informatization process through a new approach that is called socio-cultural. Informatization is defined as the global process of information (the main resource of management and development of modern societies) possession to enhance the intellectual potential of society and its members, which will ensure further progress of the civilization. The social-cultural approach is characterized as a) social determination of society's informatization process, b) the large-scale spread of the influence of information technologies upon all sectors of the society and resources of human activities. It provides an opportunity to examine the process of informatization (typical for modern societies) not only from the perspective of technical impact but also, more importantly, from the perspective of social impact. Within the framework of the socio-cultural approach, the author identifies and analyzes the following criteria: technological, socio-political, socio-economic and cultural. These criteria are analyzed from the perspective of Armenian society.

Key words: *informatization, information technologies, information society, information impact, E-governance, network, intellectual potential*

Ներկայացվել է՝ 19.10.2019

Գրախոսվել է՝ 02.11.2019

Ընդունվել է տպագրության՝ 03.12.2019